


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2015 թվականի փետրվարին


(վերլուծություն)

2015 թվականի փետրվարին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 12049 գործարք, որոնց քանակը 2015 թվականի հունվար ամսվա համեմատ աճել է 34.0 %-ով, իսկ 2014 թվականի փետրվարի համեմատ՝ նվազել 28.6 %-ով:

2015 թվականի փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2015 թվականի փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2015 թվականի փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3834 օտարման գործարքի 71.5 %-ը կազմել է առուվաճառքը, 27.9 %-ը՝ նվիրատվությունը և 0.6 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքի քանակի 31.8 %-ն

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 32.9 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2015 թվականի փետրվարին, 2015 թվականի հունվարի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 81.4 %-ով, իսկ 2014 թվականի փետրվարի համեմատ՝ նվազել 4.0 %-ով:

2015 թվականի փետրվարին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 61.7 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2015 թվականի փետրվարին, 2015 թվականի հունվարի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 75.1 %-ով, իսկ 2014 թվականի փետրվարի համեմատ՝ նվազել 33.4 %-ով:

2015 թվականի փետրվարին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	փետրվար 2014 թ.	փետրվար 2015 թ.	հունվար 2015 թ.
Կենտրոն	428000	428000	428000
Արաբկիր	356600	356600	356600
Քանաքեռ-Զեյթուն	282700	282600	282600
Նոր Նորք	252000	253000	252800
Ավան	260000	260500	260150
Էրեբունի	250600	251850	251100
Շենգավիթ	256100	256900	256750
Դավթաշեն	275150	275600	275100
Աջափնյակ	249400	249700	249500
Մալաթիա-Սեբաստիա	242000	243000	242400
Նուբարաշեն	154900	156600	156200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի փետրվարին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2015 թվականի հունվարի համեմատ աճել են 0.1%-ով:

2015 թվականի փետրվարին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 351 բնակարան, որոնց քանակը, 2015 թվականի հունվարի համեմատ, աճել է 2.1 անգամ, իսկ 2014 թվականի փետրվարի համեմատ՝ նվազել 11.4 %-ով:

2015 թվականի փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով,

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		փետրվար 2014 թ.	փետրվար 2015 թ.	հունվար 2015 թ.
Արագածոտն	Աշտարակ	115300	116000	116000
	Ապարան	57300	57500	57500
	Թալին	65000	65850	65850
Արարատ	Արտաշատ	95300	97600	97100
	Մասիս	115000	115800	115800
	Վեդի	100000	101000	100700
	Արարատ	75300	75850	75500
Արմավիր	Վաղարշապատ	154150	154100	154100
	Արմավիր	121200	121200	121200
	Մեծամոր	87500	87500	87500
Գեղարքունիք	Սևան	99200	99200	99200
	Գավառ	59800	60000	59850
	Մարտունի	107650	107700	107700
	Վարդենիս	44800	44800	44800
	Ճամբարակ	28700	28700	28700
Լոռի	Վանաձոր	88400	88500	88500
	Ստեփանավան	74500	74600	74600
	Սպիտակ	99800	99800	99800
	Ալավերդի	55000	55100	55100
	Տաշիր	47300	47300	47300
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20200	20300	20300
Կոտայք	Աբովյան	155100	155000	155000
	Նոր Հաճն	128600	128550	128550
	Բյուրեղավան	108150	108100	108100
	Եղվարդ	109300	109350	109350
	Հրազդան	63800	63800	63800
	Ծաղկաձոր	292500	292400	292400
	Զարենցավան	85500	85500	85500
Շիրակ	Գյումրի	109300	109200	109200
	Արթիկ	66600	66700	66700
	Մարալիկ	40700	40700	40700
Սյունիք	Գորիս	121900	122850	122500
	Կապան	92300	93500	93150
	Սիսիան	91150	91800	91300
	Մեղրի	80850	81500	81000
	Ագարակ	46900	47200	46900
	Քաջարան	94650	94600	94600
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց ձոր	Վայք	95000	94900	94900
	Եղեգնաձոր	124850	125500	125500
	Ջերմուկ	112500	112900	112900
Տավուշ	Դիլիջան	113150	113700	113700
	Իջևան	118300	118200	118200
	Բերդ	60200	60200	60200
	Նոյեմբերյան	49900	49850	49850
	Այրում	31850	31850	31850

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2015 թվականի հունվարի համեմատ աճել են 0.1 %-ով:

2015 թվականի փետրվարին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 345 առուվաճառքի գործարք, այդ թվում՝ Երևան քաղաքում՝ 95 գործարք, մարզերում՝ 250 գործարք: 2015 թվականի փետրվարին, 2015 թվականի հունվարի ամսվա համեմատ, անհատական բնակելի տան առուվաճառքի գործարքի քանակն աճել է 67.5 %-ով, ընդ որում, Երևանում՝ 72.7 %-ով, իսկ մարզերում՝ 65.6 %-ով: 2015 թվականի փետրվարին 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տան առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 16.9 %-ով, ընդ որում, Երևանում՝ 7.8 %-ով, իսկ մարզերում՝ 19.9 %-ով:

2015 թվականի փետրվարին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	փետրվար 2014 թ.	փետրվար 2015 թ.	հունվար 2015 թ.
Կենտրոն	476100	476100	476100
Արաբկիր	383000	383000	383000
Քանաքեռ-Զեյթուն	295000	295000	295000
Նորք-Մարաշ	319200	319200	319200
Ավան	270500	270500	270500
Էրեբունի	239500	239750	239750
Շենգավիթ	255000	255000	255000
Դավթաշեն	276000	276000	276000
Աջափնյակ	250050	250050	250050
Մալաթիա-Սեբաստիա	238000	238000	238000
Նուբարաշեն	150500	150800	150800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի փետրվարին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2015 թվականի հունվարի համեմատ մնացել են անփոփոխ:

2015 թվականի փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)
--------	----------	--------------------

		փետրվար 2014 թ.	փետրվար 2015 թ.	հունվար 2015 թ.	
Արագածոտն	Աշտարակ	136200	136200	136200	
	Ապարան	60050	60050	60050	
	Թալին	69250	69250	69250	
Արարատ	Արտաշատ	100000	100000	100000	
	Մասիս	115100	115100	115100	
	Վեդի	102300	102300	102300	
	Արարատ	88000	88000	88000	
Արմավիր	Վաղարշապատ	153100	153100	153100	
	Արմավիր	107000	107000	107000	
Գեղարքունիք	Սևան	94800	94800	94800	
	Գավառ	57100	57100	57100	
	Մարտունի	96100	96100	96100	
	Վարդենիս	41000	41000	41000	
	Ճամբարակ	31100	31100	31100	
Լոռի	Վանաձոր	100000	100000	100000	
	Ստեփանավան	90000	90000	90000	
	Սպիտակ	114000	114000	114000	
	Ալավերդի	50200	50200	50200	
	Տաշիր	51900	51900	51900	
	Թումանյան	12000	12000	12000	
	Շամլուղ	14000	14000	14000	
	Ախթալա	30000	30000	30000	
Կոտայք	Աբովյան	157000	157000	157000	
	Նոր Հաճն	129800	129800	129800	
	Բյուրեղավան	120500	120500	120500	
	Եղվարդ	116100	116100	116100	
	Հրազդան	82600	82600	82600	
	Ծաղկաձոր	305000	305000	305000	
Չիրակ	Չարենցավան	83000	83000	83000	
	Գյումրի	118500	118500	118500	
	Արթիկ	63100	63100	63100	
	Մարալիկ	52000	52000	52000	
	Սյունիք	Գորիս	130000	130000	130000
		Կապան	100000	100000	100000
Սիսիան		96500	96500	96500	
Մեղրի		84500	84500	84500	
Ագարակ		46900	46900	46900	
Դաստակերտ		11610	11610	11610	
Վայոց ձոր	Վայք	90050	90050	90050	
	Եղեգնաձոր	116600	116600	116600	
	Ջերմուկ	131300	131300	131300	
Տավուշ	Դիլիջան	113000	113000	113000	
	Իջևան	123200	123200	123200	
	Բերդ	60100	60100	60100	
	Նոյեմբերյան	48300	48300	48300	
	Այրում	36250	36250	36250	

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները

(ներառյալ տնամերձի միավորի գինը), 2015 թվականի հունվարի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2015 թվականի փետրվարին հանրապետությունում օտարվել է 1566 միավոր (705.00 հա) հող, որից Երևանում՝ 95 միավոր (6.98 հա): Օտարված հողերն, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 907 միավոր (638.67 հա), որից Երևանում՝ 9 միավոր (1.23 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 416 միավոր (55.35 հա), որից Երևանում՝ 53 միավոր (3.19 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 108 միավոր (4.62 հա), որից Երևանում՝ 31 միավոր (1.63 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 13 միավոր (2.87 հա), որից Երևանում՝ 2 միավոր (0.93 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 6 միավոր (0.46 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 116 միավոր (3.03 հա) ընդհանուր մակերեսով:

2015 թվականի փետրվարին հանրապետությունում օտարված հողերից 1203 միավորի (560.27 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 81 միավոր (5.30 հա), նվիրատվության գործարք՝ 348 միավորի (107.83 հա), որից Երևանում՝ 14 միավոր (1.68 հա) և փոխանակության գործարք՝ 15 միավորի (36.90 հա):

Հանրապետությունում 2015 թվականի փետրվարին, 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 30.2 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 49.2 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 6.9 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 8.3 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 156.89 հա, որից 151.33 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 24.3 %-ը կամ 292 միավորը (100.08 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 29 միավոր (0.97 հա), իսկ 75.2 %-ը կամ 905 միավորը (460.04 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 52 միավոր (4.33 հա): 2015 թվականի փետրվարին հանրապետությունում գրանցվել է հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 6 գործարք (0.15 հա):

Ստորև ներկայացվում է 2015 թվականի փետրվարին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	1	0.01	13	0.73	15	0.23	8	0.41	1	0.92	28	1.67	15	1.33
Արագածոտն	6	2.57	0	0.00	0	0.00	8	0.41	24	18.31	0	0.00	37	19.66	1	0.01
Արարատ	16	19.10	1	0.03	8	0.05	7	0.06	98	49.96	0	0.00	48	4.90	4	0.18
Արմավիր	14	53.67	0	0.00	0	0.00	1	0.09	96	97.66	2	0.81	34	4.62	4	0.04
Գեղարքունիք	1	4.69	1	0.74	3	0.14	3	0.09	20	20.47	0	0.00	21	2.53	1	0.20
Լոռի	1	1.64	1	0.04	3	0.06	5	0.05	166	95.03	2	0.13	6	0.48	4	0.02
Կոտայք	8	1.81	0	0.00	11	0.27	4	0.05	61	38.12	0	0.00	39	2.78	3	0.05
Շիրակ	0	0.00	0	0.00	9	0.10	4	0.02	45	50.85	0	0.00	9	1.48	1	1.00
Սյունիք	0	0.00	3	0.17	3	0.01	1	0.09	59	31.48	0	0.00	10	1.19	2	0.02
Վայոց ձոր	2	8.98	0	0.00	0	0.00	0	0.00	17	7.49	0	0.00	3	0.33	2	0.10
Տավուշ	5	0.40	1	0.03	7	0.55	8	0.06	17	4.88	0	0.00	13	0.78	2	0.01
Ընդամենը	53	92.86	8	1.02	57	1.91	56	1.15	611	414.66	5	1.86	248	40.42	39	2.96

Ստորև ներկայացված է 2015 թվականի փետրվարին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը:

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր								բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	13	0.23	1	0.01	5	0.10	7	0.12	16	0.73	0	0.00	0	0.00	8	0.63	8	0.10
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	10	2.72	2	2.31	0	0.00	0	0.00	8	0.41
Արարատ	2	0.004	0	0.00	0	0.00	2	0.004	29	18.98	15	18.85	1	0.03	8	0.05	5	0.05
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	14	51.70	13	51.61	0	0.00	0	0.00	1	0.09
Գեղարքունիք	1	0.04	0	0.00	0	0.00	1	0.04	7	5.63	1	4.69	1	0.74	3	0.14	2	0.06
Լոռի	2	0.01	0	0.00	0	0.00	2	0.01	8	1.78	1	1.64	1	0.04	3	0.06	3	0.04
Կոտայք	1	0.004	0	0.00	1	0.004	0	0.00	22	2.12	8	1.81	0	0.00	10	0.26	4	0.05
Շիրակ	4	0.012	0	0.00	3	0.01	1	0.002	9	0.11	0	0.00	0	0.00	6	0.09	3	0.02
Սյունիք	4	0.10	0	0.00	3	0.01	1	0.09	3	0.17	0	0.00	3	0.17	0	0.00	0	0.00
Վայոց ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	2	8.98	2	8.98	0	0.00	0	0.00	0	0.00
Տավուշ	1	0.004	0	0.00	0	0.00	1	0.004	19	0.98	4	0.34	1	0.03	7	0.55	7	0.06
Ընդամենը	28	0.40	1	0.01	12	0.12	15	0.27	139	93.90	46	90.23	7	1.01	45	1.78	41	0.88

2015 թվականի փետրվարին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 7 գործարք (3.03 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2015 թվականի փետրվարին, 2014 թվականի փետրվարի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 13.7 %-ով: Ընդ որում, Երևանում աճել է 2.3 անգամ, իսկ մարզերում՝ աճել է 5.0 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 48.4 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 55.2 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 32.8 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 7.0 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2015 թվականի փետրվարին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	2	2.31	639.2	748.9	694.1	11	2.92	365.0	12000.0	3689.5
Ապարան								86.5	2727.3	655.3
Թային						12	14.13	93.6	5494.5	765.5
Ծաղկահովիտ						1	1.25	79.5	1000.0	335.0
Արարատի մարզ										
Արտաշատ	2	0.30	170.3	3100.0	1635.2	48	21.79	335.1	10833.3	2589.3
Մասիս	2	3.46	67.8	1000.0	533.9	7	3.22	200.0	11904.8	3078.1
Վեդի	11	15.09	60.0	629.1	208.1	42	24.55	207.0	10795.1	1805.0
Արմավիրի մարզ										
Արմավիր	8	47.77	30.5	60.9	53.1	52	58.31	294.3	9090.0	1200.0
Բաղրամյան	1	1.75	1217.7	1217.7	1217.7	18	24.93	90.6	2561.1	865.0
Վաղարշապատ	4	2.09	84.0	1681.7	483.4	20	10.17	444.4	11764.7	1935.8
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	4.69	2000.0	2000.0	2000.0	5	1.55	199.8	1875.0	450.0
Ճամբարակ						8	8.01	60.5	953.3	352.0
Մարտունի						1	0.07	51.1	2850.0	782.3
Սևան						2	2.16	52.2	2134.8	328.5
Վարդենիս						4	8.69	41.2	2575.1	428.3
Լոռու մարզ										
Ալավերդի						9	6.47	170.4	6424.2	605.0
Գուգարք						8	1.17	234.6	6065.9	786.5
Սպիտակ						1	0.98	250.0	5555.5	705.5
Ստեփանավան						4	2.51	90.6	1686.6	370.0
Տաշիր	1	1.64	167.8	167.8	167.8	144	83.90	45.3	1384.4	180.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	1	0.02	2699.2	2699.2	2699.2	13	4.47	279.3	11942.7	4000.0
Եղվարդ	3	0.73	167.5	2367.1	956.9	41	29.09	174.4	11971.8	2335.0
Հրազդան	4	1.06	251.9	1050.0	519.0	6	2.72	130.5	10256.4	1210.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						12	15.44	252.0	1693.1	610.0
Ամասիա						1	6.01	40.9	261.0	130.0
Անի						18	18.84	110.6	546.9	447.5
Աշոցք						5	5.70	58.5	215.8	137.2
Արթիկ						9	4.86	79.4	1428.6	485.0

Սյունիքի մարզ										
Գորիս						1	0.03	92.6	1023.2	776.5
Կապան						6	6.38	120.0	841.6	400.0
Մեղրի						11	1.98	193.0	3000.0	750.5
Սիսիան						41	23.09	46.3	1977.4	575.3
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	2	8.98	21.7	75.0	48.4	5	2.29	125.0	10000.0	1850.0
Վայք						12	5.21	58.8	1430.7	632.5
Տավուշի մարզ										
Բերդ						7	1.37	213.3	3783.8	685.0
Իջևան	1	0.01	159.7	159.7	159.7	1	0.04	267.5	9454.5	1335.0
Նոյեմբերյան	3	0.33	1100.6	1650.0	1284.2	9	3.47	46.7	7368.4	965.5

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2015 թվականի փետրվարին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ ²)	պայմանագրային գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ ²)	շուկայական գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Ստավելագույն	Միջին			Նվազագույն	Ստավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						10	8968.0	130.7	22200.0	2584.0
Ապարան								124.1	609.6	391.1
Թային								63.2	1454.8	152.4
Ծաղկահովիտ						1	1628.0	60.0	214.3	93.0
Արարատի մարզ										
Արտաշատ	2	279.1	570.7	5547.8	3059.3	12	19515.0	173.9	7140.3	902.7
Մասիս	6	218.3	3110.0	5082.9	3652.6	22	15795.0	187.5	25000.0	1208.0
Վեդի						14	13736.0	126.1	5000.0	662.7
Արմավիրի մարզ										
Արմավիր						12	14940.0	131.6	9090.9	1214.2
Բաղրամյան						1	1200.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ						20	28900.0	197.4	26528.4	1531.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						3	3170.0	186.6	1084.3	684.3
Ճամբարակ						1	1900.0	71.3	2286.2	148.1
Մարտունի						15	16588.0	119.3	5000.0	282.5
Սևան								240.0	3110.4	330.0
Վարդենիս	3	1436.5	66.6	172.8	123.8	2	3682.0	72.5	987.2	150.2
Լոռու մարզ										
Ալավերդի	3	566.7	250.0	1650.0	747.0			114.3	1388.9	217.4
Գուգարք						4	3283.9	77.9	14083.3	1260.4
Սպիտակ						1	960.0	104.9	1348.3	207.6
Ստեփանավան								88.2	1666.7	175.7
Տաշիր						1	547.0	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	5	126.0	4751.5	5438.0	5160.0	22	16355.8	264.5	35353.5	1985.5
Եղվարդ	5	2522.4	2612.6	5041.5	3596.9	16	11371.2	173.6	27000.0	2862.4
Հրազդան						1	42.0	117.7	34848.5	1321.7

Շիրակի մարզ										
Ախուրյան	5	818.5	3235.9	6290.9	4079.5	3	2614.0	113.6	18750.0	333.0
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի						1	1698.1	67.9	180.6	193.0
Աշոցք						1	6750.0	40.8	144.0	65.0
Արթիկ	1	35.0	2875.1	2875.1	2875.1	4	3700.0	111.8	5000.0	218.5
Սյունիքի մարզ										
Գորիս						4	2952.0	112.2	1700.0	365.3
Կապան						1	3800.0	67.9	2638.9	343.0
Մեղրի						4	3460.0	68.5	632.9	241.5
Սիսիան						1	1670.0	123.5	875.0	228.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր						3	3290.4	96.7	7659.6	508.0
Վայք								120.7	1448.3	242.5
Տավուշի մարզ										
Բերդ						1	370.0	75.8	810.0	125.3
Իջևան	7	5496.1	1366.2	3000.0	2623.7	9	4771.5	74.1	14423.1	538.0
Նոյեմբերյան						3	2627.8	125.0	1948.1	243.5

2015 թվականի փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 609 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.1 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքի 70.9 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2015 թվականի փետրվարին, 2015 թվականի հունվարի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 2.3 անգամ, իսկ 2014 թվականի փետրվարի համեմատ՝ նվազել 28.6 %-ով:

2015 թվականի փետրվարին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 97 բնակարանի, 49 անհատական բնակելի տան, 269 հասարակական, 48 արտադրական նշանակության օբյեկտի, 132 հողի և 14 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2015 թվականի փետրվարին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 4 վարձակալության գործարքի քանակը 2015 թվականի հունվարի համեմատ աճել է 2.0 անգամ, իսկ 2014 թվականի փետրվարի համեմատ՝ նվազել 20.0 %-ով: 2015 թվականի փետրվարին հանրապետությունում վարձակալված 566.76 հա հողից 0.08 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 566.68 հա հողից 550.59 հա կազմում է գյուղատնտեսական նշանակության, 4.83 հա արդյունաբերական օբյեկտի, 0.87 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտի հողը: Առավել մեծ մակերեսով հող վարձակալվել է Արարատի մարզում՝ 152.71 հա, որից 152.53 հա գյուղատնտեսական նշանակության:

2015 թվականի փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1008 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումների քանակի 8.4 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2015 թվականի հունվարի համեմատ, աճել է 2.5 անգամ, իսկ 2014 թվականի փետրվարի համեմատ՝ նվազել 52.0 %-ով:

Գրավադրման գործարքն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանի (53.6 %), անհատական բնակելի տան (22.5 %), հասարակական նշանակության օբյեկտի (9.3 %) և հողի (7.7 %) նկատմամբ: Երևան

քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 595 գրավադրման գործարքից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2015 թվականի հունվարի համեմատ աճել է 2.4 անգամ, իսկ 2014 թվականի փետրվարի համեմատ՝ նվազել 48.3 %-ով:

2015 թվականի փետրվարին հանրապետությունում գրավադրվել է 154.49 հա հող, որից 5.90 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողի 89.5 %-ը կամ 138.21 հա գյուղատնտեսական նշանակության է, որից 0.99 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հող գրավադրվել է Արագածոտնի մարզում՝ 108.95 հա, որից 108.63 հա գյուղատնտեսական նշանակության:

2015 թվականի փետրվարին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 83 գործարք: 2015 թվականի փետրվարին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2015 թվականի հունվարի համեմատ, աճել է 3.5 անգամ, իսկ 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ նվազել 50.0 %-ով:

Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 54 գործարք, որը 2015 թվականի հունվարի համեմատ աճել է 2.7 անգամ, իսկ 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ նվազել 55.4 %-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2015 թվականի հունվարի համեմատ աճել է 7.3 անգամ, իսկ 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ նվազել 35.6 %-ով:

2015 թվականի փետրվարին հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 1748 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2015 թվականի հունվարի համեմատ, աճել է 2.3 անգամ, իսկ 2014 թվականի փետրվարի համեմատ՝ 8.4 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումներում կազմել է 14.5%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Գեղարքունիքի մարզում (21.5 %):

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե